

Ա. ԲՈԴՐԱՆՈՎ
ՅԵՎ
Ա. ՊԼԱՏՈՆՈՎ

ԲՈԼՇԵՎԻԿՈՐԵՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ
ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՎԵՐԵԼՔԸ ԱՍԽ Հ-ՈՒՄ

36
-78

ԱՄԽՀ ՀՈՂՃՈՂԿԱՄԱՏԻ
ՏԵԽՊՐՈՊ
ԿՈՒՑՀՐՈՑ • ԲԱԳՈՒ
1934

Ա. ԲՈԳԻՄՆՈՎ,
ՅԵՎ.
ՊԼՍՏՈՆՈՎ

636

F - 78

my'

ԲՈԼԵՐԵՎԻԿՈՐԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ա. Ս Ի Հ - Ռ Ի Մ

328294
1007

三
三



ԱՄԲՈՂՋ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Ամենեին պատահական չե՛ վոր անասնապահության հարցերն այնպիսի խոշոր տեղ գրավեցին կուսակցության 17-րդ համագումարի աշխատանքում։ Ընկ Ստալինը համագումարին զեկուցման մեջ սպառիչ կերպով լուսաբանեց անասնապահության դրությունը և ամբողջ սրությամբ բացեց գյուղատեսության այդ ճյուղի դեկավարության մեջ ԽՍՀՄ Հողժողկոմատի կողմից տեղի տըրված թերությունները։ Կուսակցության, բանվոր գասակարգի և կոլտնտեսական գյուղացիության առաջ հիմա ամբողջ հասակով կանգնել ե անասնապահության պրոբլեմը հաջող կերպով լուծելու խնդիրը, վորը հիմա դարձել ե առաջնակարգ պրոբլեմ։

Անասնապահությունը, քան գյուղատնտեսության վորեցի մի այլ ճյուղը, վերակազմակերպման շրջանն ապրեց ավելի հիվանդագին կերպով։ Կուլակային ավիտացիան՝ նախքան կոլտնտեսություններ մտնեն՝ անասունների մասայական մորթուման համար, անասնապահական շրջաններում կուլակային տնտեսությունների բարձրաքանակ միջնախավը, ձին տրակտորով փոխարինելու մասին յեղած վնասարարական տեսությունները, այս բոլորը ծանր վնաս են հասցըել անասնապահության և անասունների պլիսաքանակի անկման պատճառն են հանդիսացել։

Հայերենը խմբադրեց Բահ.
Թարգմանեց Ս. Ահեմյան
Տեղ.-խմբագիր Կ. Թառլանյան

Baş Mətbuat Mədəritiliyi Mıyməkkılığı № 2402 Sifariş № 375 Tırız 1000. Fırqənəşir № 204. Kaçır formatı 72X110. İstehsalata verilmiş 28/III-34 Cərpa verilmiş 30/IV-34. Cap listi ¹₇₂. Azərnəşr mətsvəəsində basıldı. Bakı,
Əli Bajramov kycəsi, „26“-lar adına, Kitab Sarayı“

Հենց դրանով ել բացատրվում ե այն, վոր «Մենք հաօվետու շրջանում անառուների գլխաքանակի մեջ ունենք վոյ թե վերել, այլ դեռեվս շարունակվող անկում՝ նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ» (ՍՏԱԼԻՆ): 1930 թվին սկսած գլխաքանակի անկումը շարունակվեց մինչև 1933 թիվը: 1933 թվականին, այսինքն՝ վերակադմակերպման շրջանը վերջանալուց հետո առաջին տարում, յերբ հացահատիկային անառության գարգացման մեջ ձեռք ելին բերվել զգալի հաջողություններ, գլխաքանակի անկման չափերը հասել են նվազագույնի, իսկ խոզաբուծության մեջ նկատվել են ուղղակի վերելքի նշաններ:

Անկասկած, ամենամոտ ժամանակում, քանի վերջնականապես վերացվում են վերակազմակերպման շրջանի մսիունները—անասնապահությունն արագորեն կդնա դեպի բարձունք: «Սյունակում ե, վոր 1934 թիվը պետք ե յեվ կարող ե դառնալ ամբողջ անասնապահության մեջ վերելի բեկման սարի» (ՍՏԱԼԻՆ):

Հողագործական որդանները, և, առաջին հերթին ԽՍՀՄ հողմողկոմատը, կրում են անասնաբուծության անկման մեղքի զգալի մասը: Անասնապահության վիճակի համար անազանգ չբարձրացնելով, թերություններն ամեն կերպ սվաղելով և յերեմն կուսակցությունից ու պետությունից թագնելով գործերի խական դրությունը, սառնարատությամբ նայելով ձին տրակտորով փոխարինելու վահարարական տեսություններին—ԽՍՀՄ հողմողկոմատը և նրա անասնապահական վարչությունը՝ անասնապահական անառության ղեկավարությունն իրականացնելու գործում իրենց լիակատար անընդունակություն են ցույց տվել: Ահա թե ինչու, ինչպես մատնանշեց ընկ. Ստալինը և կուսակցության 17-րդ համագումարը, «անասնապահության գործը պետք է իրենց ձեռքը վեցընեն ամբողջ կուսակցությունը, մեր բոլոր աշխատողները, կուսակցական թե անկուսացական...»:

Սյունակում ե, վոր կուսակցական կազմակերպությունները հիմա պետք ե ընդհուպ զբաղվեն անասնա-

պահությամբ այնպես, ինչպես իր ժամանակին զբաղվել են հացահատիկային պրոլետով: Ժամանակ ե դադարել մտածելուց, վոր անասնապահության վերելքը կարելի յետպահովել հողային վարչությունների զեկուցումները լըսելով և ընդհանուր բանաձեռներ ընդունելով: Ամրապնդելով և վերակառուցելով հողային որդանները, ամրապնդելով, մասնավորապես, շրջանային հողային բաժինները և ստիպելով հողմողկոմատի սիստեմին լուրջ կերպով, առանց շաղակրատության զբաղվել անամնապահությամբ, կուսակցական կազմակերպությունները պետք ե հիմա իրենք խորասուցվեն անասնապահության գործնական հարցերի մեջ, ուսումնասիրեն այդ գործի տեխնիկան, բարձրացնեն յուրաքանչյուր ստորին կուսակցակերպության, կոմունիստի և անկուսակցական կոլտնտեսականի պատասխանավորությունը՝ զլիաքանակի դրության և աճման համար:

Կոլտնտեսության, խորհնանասության մեջ, ֆերմայում, բազայում, արոտատեղերում և լուծվում անասնապահության բախտը: Յեկ ճիշտ այնպես հացահատիկային տնտեսության վերելքի առթիվ կոմունիստները կարողացել են իրենց շուրջը համախմբել բոլոր այն լավագույնը, ինչ վոր ունեինք կոլտնտեսություններում,—այժմ ել պետք ե այդ իսկ ճանապարհով լուծեն անասնապահության պրոբլեմը:

Միամատություն կիններ մտածել, թե անասնապահության պրոբլեմը կարելի յել լուծել իսկույն և յեթ: Անասնապահությունը դա գյուղատնտեսության ավելի բարդ և դրժվարին ճյուղն է: Բայց, յերկրորդ հնգամյակի անասնապահության մասին պլանն անվիճելիորեն կարելի կլինիկատարել, յեթե տարեց-տարի, որեցոր, համբերատարությամբ և համառությամբ, զոտեխնիկայի բոլոր կանոններով լավ կազմակերպված աշխատանք տարվի անասնապահական տնտեսության մեջ: Կոմունիստներից և անկուսակցական կոլտնտեսականներից ու խորանտեսությունների բանվորներից պահանջվում ե, ինչպես յերեք, ա-

նասնապահության տեխնիկայի տիրապետումը և հոկայական ուշադրություն դեպի այդ արտադրության բոլոր մանրունքները, այդ նուրբ արտադրության բոլոր նըրությունները:

Գարնանացանի կամպանիայի մոտենալը պետք է բոլոր կուսակցական կազմակերպություններին ստիպի գործառնականորեն ձեռնամուխ լինել անասնապահության վերելքի համար, վորպեսզի արդեն այս տարի դրվի հոտերի գլխաջանակի հետագա աճման ամուր պատվանդանը:

Խոշորագույն նշանակություն է ունենալու կերի հզոր բազայի ստեղծումը: Այդ լինդիրը լուծվում է յերկու ուղղությամբ՝ հացահատիկային ու կերային կուլտուրաների բերքատվության բարձրացումով, առաջին հերթին, և մարդագետինների ու արոտատեղինների ճիշտ ոգտագործումով: Պետք է ամեն կերպ վողջունել մի շարք կոլտընտեսականների ձեռնարկումը, վորոնք բոլորովին չթուլացնելով իրենց ուշադրությունը հացահատիկային կուլտուրաների նկատմամբ, ձգտում են ցանքսափոխությունների մեջ ապահովել կերային հողամասերի առկայությունը:

Բայց, այդ գործի մի կողմն եւ Հասել է ժամանակն իսկականորեն ձեռնամուխ լինելու մարդագետնային տընտեսության կազմակերպման գործին: Միթե քիչ են դեպքերը, յերբ հիանալի մարդագետիններ, վորոնք կարող կլինեյին տալ ահազին քանակությամբ խոտ, թողված են անինամ և ոգտագործվում են վայրենաբար: Քիչ չեն նաև այնպիսի որինակներ, յերբ կոլտնտեսությունները, չըցանկանալով աշխատել խոպան հողերը յուրացնելու համար, սկսում են հերկել հիանալի ջրովի մարդագետինները: Դժվար չե հաշվել, թե ինչ ահազին քանակությամբ խոտ է կորչում մարդագետնային և արոտատեղային տնտեսության ճիշտ ոգտագործման բացակայության պատճառով: Պետք է ուժեղացնել լավ կոլտնտեսական մարդագետնի, կոլտուրական արոտատեղու համար, ճիշտ արոտ կազմակերպելու պայքարի գործը:

Սոցիալիստական անասնապահության կերային բազան պետք է լիովին համապատասխանի յերկրորդ հնգամյակի խնդիրներին: Մենք մեր արամագրության տակ ունենք կերի խոշորագույն միջոցներ, և, յեթե վորեն տնտեսության մեջ անասունը ձմռան մուռ է առանց կերի, ապա այդ բացարպվում է միայն նրանով, վոր ղեկավարները „Այսպաներ“ են յեղել, և վոր նրանք ծուլացել են ժամանակին զբաղվելու այդ գործով:

Ժամանակ է այլ ձեփով մոտենալ նաև անասնապահական կոլտնտեսություններում զբաղված կազմերին: Գաղանի չե, վոր մի շարք տեղերում կոլտնտեսական ֆերմաներ են ուղարկում արտադրության մեջ ամենավատ աշխատողներին, այստեղ հաճախ ներս է սղոսկում կուլակը, վորովհետև այնտեղ չկա վերանսկողություն, չկա խսկական ստուգում: Բայց, միաժամանակ պետք է նշել, վոր աշխատանքի կազմակերպման, հաշվառման դրման, նորմավորման և վարձատրման ասպարիզում անասնապահական ֆերմաները շատ անողտավետ կերպով են տարբերվում կոլտնտեսային տնտեսության մյուս ճյուղերից: Յեթե դիտենք ֆերմաների աշխատանքը, ապա աչքի յեւնինում աղաղակող հավասարանք և դիմագրկություն, ղեկավարող կազմերի հոսունություն:

Ահա յերկու որինակ Ազգովակո Զերնումորսկու յերկրի կոլտնտեսությունների պրակտիկայից: Արմավիրի շրջանի „Մայակ-տրուդա“ կոլտնտեսության կաթնա-ապրանքային ֆերման 1934 թվականի ծնված 90 հորթերից կորցրել ե 37-ը: Այդ ֆերմայում մի տարվա ընթացքում փոխվել ե հինգ վարիչ, գրեթե լիովին փոխվել ե աշխատողների ամբողջ կազմը: Կամ, ահա Սայյուկի շրջանի «Խերորոբ» կոլտնտեսության խողաբուծական ֆերմայում՝ 1933 թվականին ծնվել են 527 խոճկոր, խակ սատկել ե 257 ը: Ֆերմայի բոլոր աշխատողներն ստանում են հավասարաչափ և վոչ վոք նյութապես չի շահագրգուված մատղաշների աճեցման գործով: Կոլտնտեսականները թողնում

Են գերժան ու անցնում դաշտավարական բրիգադների աշխատանքին:

Այդպիսի փաստեր՝ ինչքան կամենաք: Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ն Հողժողկոմատն իր ընդհանուր հրամաններն ե զրել, տեղերում հավասարանքն ու դիմազը կությունը կերել են և այն չնշըն ծինը, վորը տվել ե կոլտնտեսական անամնապահությունը: Հողային որգանները, մի շարք կոլտնտեսային գիտա-հետազոտական ինստիտուտներ, իր ձգտելով ապահովել դաշտագործության հաջողությունը, այնպես են կազմել աշխատանքի կազմակերպումն ու վարձատրումն անամնաբուծության մեջ, վոր վոչնչացվել ե կոլտնտեսականի ամեն մի շահագրգռվածությունն իր ֆերմալի աշխատանքի արդյունքի նկատմամբ: Հարկ ել չկա ասելու, վոր այդպիսի սիստեմը պետք ե ջախջախել: Դաշտագործության մեջ աշխատանքին խթան տալը հակառակության մեջ չի գտնվում՝ անամնապահության մեջ աշխատանքին և մատղաշ անասունների պահպանմանը խթան տալու ինդըի հետ: Պետք ե յենթագրել, վոր ամենամոտ ժամանակում անամնապահական բրիգադը կամրապնդվի և կոլտնտեսականներն անմիջականորեն շահագրգռված կլինեն անամնապահության զարգացման գործում:

Առանձին են դրված հոտի վերարտադրման հարցերը: Զիսուելով արդեն մատղաշ անասունների զգալի անկման մասին, վորը կարելի յե և պետք ե վերջ տալ, անհրաժեշտ ե նշել բեղմանպրման կամպանիայի բացառիկ նշանակությունը, վորին վոչ պակաս ուշադրություն պետք ե նվիրվի, քան ցանքսին: Կովերի ստերջության բարձր տոկոսը խռովում ե հենց այդ միջոցառմանն անուշադրության մասին: Մյուս կողմից, անամնապահական խորտնտեսությունները, վորոնք պետք ե ցեղային անասուն վերարտադրեն, կոլտնտեսային կաթի ֆերմաները մատակարարեն ելիտային արտադրողներով—վատ են զլուխ հանում այդ գործից: Վատ են ոգտագործվում նույնպես կոլտնտեսություններում յեղած ցեղական արտադրողները, ժամանակն ե արդեն վորպեսզի անասունների ցեղայնաց-

ման գործը, մետիզացիան կազմակերպվեն ճիշտ և գըտնըվեն շրջանային հողային բաժինների անմիջական հսկողության տակ:

Դրա կազմակցությամբ պետք ե լավ մտածել և ճիշտ կազմակերպել կոլտնտեսային անասնապահության զոռության հիմքի կազման և վետերինար սպասարկման սիստեմը:

Առանձին ե դրվում ձիու հարցը: Ընկ. Վորությունը, 17-րդ համագումարում, իր ճառում ցայտուն կերպով ուրագծեց ձիաբուծական անտեսության դրությունը: Ձիաբուծության դրությունն այնպիսին ե, վոր նրան պետք ե բացառիկ ուշադրություն նվիրվի, առավել ևս, նկատի ունենալով գարնանցանի մոտենալը: Գլխավորն այստեղ կայանում ե նրանում, վոր վերջնականապես ու խիստ միջոցներով վերջարվի ձիու վայրենաբար ոգտագործմանը, մի անգամ ընդմիշտ վերջացվեն՝ ձին տրակտորով փոխարինելու մասին յեղած վասարարական տեսությունները:

Անամնապահության վերելքի վերաբերյալ միջոցառումներում մեծ տեղ պետք ե գրավի կոլտնտեսականների անհատական անամնապահությանը ցույց տրվելիք ոգնությունը: Ողնությունը կովերով, կենտկոմի և ժողովորմի վորոշումների ամենաարագ կենսագործումը՝ կովազուրկ ատակությունների ոգնություն ցույց տալու մասին, աջակցություն մանը անասունների ու թոշունների զարգացման,—ահա թե վորն ե կարեվոր ոժանդակությունը կոլտնտեսություններին և խորհանտեսություններին:

Կասկած չկա, վոր հացահատիկային պլորեմի յետեղից հաջողությամբ կլուծվի նաև անամնապահության պլորեմը: Դրա համար պետք ե արագ կերպով ուղղել չողժողկոմատի ղեկավարության թերությունները և անասնապահության գործը վերցնել ամբողջ կուսակցության ձեռքը: Ընկ. Ստալինի ղեկուցումը 17-րդ համագումարում՝ դա աշխատանքի ծրագիրն ե: („Պրավդա“-ի առաջնորդողը փետրվարի 14-ից):

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ— ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊՐՈԲԼԵՄ Ե

«1934 թվականը պետք է յեվ կարող ե
դառնալ ամբողջ անասնապահութան տեսե-
սուրյան վերելիքի բեկման տարի»: (ՍՏԱԼԻՆ):

«Անասնապահության պրոբլեմը նիմա նույնպիսի առաջ-
նակարգ պրոբլեմ է, ինչպիսին եր յերեկ արդեն հաջողու-
թյամբ լուծված հացահատիկային պրոբլեմ» (ՍՏԱԼԻՆ):
Առաջնորդի այդ ցուցմունքը լրիվ չափով վերաբերվում է
նաև Ա.Ախչ ին, վորտեղ անասնապահությունը հանդիսա-
նում է ամենահետամմաց տեղամասը: Միշտեռ Ա.Ախչ ն
անասնապահության զարգացման համար ունի ամենահա-
րուստ հսարավորությունները (կերի բնական հարստու-
թյուններ, ձմեռային ու ամառային արոտաեղների ա-
ճապին տարածություններ և այլն): Որինենաբիր կոպիտ հաշ-
վով, Ադրբեյջանի պայմանները, առանձնապես ձմեռային
արոտաեղները նկատի ունենալով, հնավորություն են
տալիս ունենալ մինչև 10 միլիոն վոչխար:

Այդ հսարավորությունների առկայությունն Ադրբեյջանը
զարձնում են անասնապահական պրոբլեմի լուծման ամե-
նակարեվոր տեղամասերից մեկը, վորոն Ադրբեյջանի բոլշե-



Մինքեչառուրի վոչխարաբուծական խորհնեսուրյունը

վիկների առաջ ահազին կարեվորություն ունեցող խնդիր-
ներ ե գնում:

Համ. Կ. (Բ) Կ. Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի
պատմական վորոշման մեջ հսարակորեն վորոշված են Ան-
դրբեյջանի գյուղատնտեսության զարգացման ձանապար-
հըն և ուղղությունը: Այդ վորոշման մեջ, վորպես գլխավոր
խնդիր դրված է յեղել «դարձնել Անդրկովկապ Խորհր-
դային Միության յերկրորդ բամբակային բազան»:

Նույն այդ վորոշմամբ Համ. Կ. (Բ) Կ. Կենտկոմը խըն-
դիր ե գրել՝ լուրջ կերպով զբաղվել անասնապահությամբ,
առանձնապես ընդգծել ե վոչխարաբուծության զարգաց-

ման նշանակությունը: „Նկատի ունենալով այն, — ասվում է այս գորոշման մեջ, — վոր վոչխարաբուծությունն յերկրում խուռ ՏԵՍԵՍԱԿԱՅԻ նշանակություն ունի, առաջարկել Ս. ՆԴՐԵԵՎԻ կոմիտին մշակել մի ժարք միջոցառումներ, վորոնի կնապատճեն վոչխարաբուծության վերակառուցմանը յեվ հետագա զարգացմանը»:

Բամբակն անասնապահությանը հակադրելու փորձերը բացահայտորեն անհիմ են, Աղրբեջանում, բացի մեծ թը վով այնպիսի շրջանների առկայությունը, փորպիսիք արնատեսույան ուղղությամբ յեղել են և կինեն գերազանցապես անասնապահական շրջաններ, բամբակային շրջաններում անհրաժեշտ ե զարգացնել անասնապահությունը, ինչպես մթերատու անասունների մասում, վորն այնտեղ հանդիսանում ե վոչ միայն կարեվորագույն ոժագակ պարենային բազա, այլ և կարող ե տալ բավականաչափ ապրանքային արտադրանք քաղաքների մատակարարման համար (միս, կաթնամթերք, բուրդ և այլն), այնպես ել ձիու և բանող անասունների այլ տեսակների (գոմեշներ, ուղտեր և այլն) գլխաքանակի զարգացման գծով:

Բամբակային շրջանների անասնապահությունն զգալի տեղ ե բունում Ա.Ս.ԽՀ-ի անասնապահական տնտեսության մեջ ամբողջությամբ վերցրած: Այսպես, ամբողջ Ա.Ս.ԽՀ-ն 2,692 հազար գլուխ բոլոր տեսակի անասունի ընդհանուր գլխաքանակից Ա.Ս.ԽՀ-ի 18 բամբակային շրջաններում ունենք 1,128,2 հազար գլուխ, այսինքն՝ ընդհանուր գլխաքանակի մոտ 40 տոկոսը:

Աղրբեջանի կուսկազմակերպությունների առաջ խընդիր ե դրվում լուծել անասնապահության պրոբլեմը վոչ պակաս հաջողությամբ ու վոչ պակաս արագությամբ, ինչպես նա լուծել ե բամբակի խնդիրը: Դրա համար „1934 թվականը պետք ե յեվ կարող ե դառնալ ամբողջ անասնապիտիքան ՏԵՍԵՍԱԿԱՅԻ ուղղության մեջ վերելի բեկման տարի“ (ԱՏԱԼԻՆ):

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍԽՀ ՈՒՄ

Վերջին յերկու տարիներն Աղրբեջանի գյուղատնտեսության մեջ յեղել են Աղրբեջանը ԽՍՀՄ-ն յերկրորդ բամբակային բազայի վերածելու խնդրի լուծման տարիներ: Մենք այդ խնդիրը լուծել ենք, — ինչպես ասել ե ընկ: Բերիան VLI համագումարում, — ավելի պակաս, քան յերկու տարում: 1933 թվականում մենք ավելի շատ բամբակ ենք հավաքել, քան յերբեք նախորդ տարիների ընթացքում:

Սյդ խնդիրը լուծվել ե ցիր ու ցան մանր գյուղացիական տնտեսությունների կոլտնաեսություններում միացնելու հիման վրա: Առաջին հնգամյակն Աղրբեջանի գյուղատնտեսության, ինչպես և ամբողջ ԽՍՀՄ-ն գյուղատնտեսության համար յեղել ե կոլեկտիվացման հնգամյակ: Գյուղում կապիտալիզմի արմատները վերջնականապես արմատախիլ անելու հիմամբ, Աղրբեջանի կուսկազմակերպությունները կարողացել են կոլտնաեսություններում միացնել գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին, զինելով նրանց՝ հանձինս ՍՏ կայանների՝ առաջավոր տեխնիկայով:

Յերկրորդ հնգամյակի սկզբում կոլեկտիվացման առկուր բարձրացավ հակայական չափով: Յեթե 1930 թվականի առ 1 ը հունվարի Ա.Ս.ԽՀ հանրապետության մեջ կոլեկտիվացման տոկոսը յեղել ե միայն 3,4, ապա 1933 թվականի առ 1-ը գեկանեմբերի նա կազմել ե 55,4⁰/₀, իսկ բամբակային շրջանում նա բարձրացել ե ավելի 1933 թվականի առ 1 ը սեպտեմբերի կազմելով 70,5⁰/₀, ամբողջ գյուղացիական ցանքսերի 90⁰/₀ ընդգրկումով: Սըանից հետում ե, վոր այդ ժամանակաշրջանն Ա.Ս.ԽՀ համար ևս յեղել ե „Վերակառուցման յեվ մեմանեսես գյուղացիական ՏԵՍԵՍԱԿԱՅԻ ուղղությունը կոլտնական ուղիների վրա փոխանցելու վերակազմակերպչական ժամանակաշրջան“ (ԱՏԱԼԻՆ):

Յեթե վերջին տարիները բամբակահավաքի բնագավառում յեղել են աճման տարիներ, ապա անասնապահության գծով, 1928-29 թվականից սկսած, մենք ունեցել ենք հակառակ պրոցեսը՝ անասունների գլխաքանակի անկում:

Այլ կերպ ասած, անասնապահական ճյուղն ամենահիվանդագին կերպով անցավ վերակազմակերպչական շրջանը:

Ահա համապատասխան աղուսակուն:

Անասունների գլխաքանակն ԱՄԽՀՄ-ում
առ 1-ը հուլիսի 1933 թ. *)

(Հազար դիմով հաշված)

	թ.	առ 1/VII						
	1913	1928	1929	1930	1931	1932	1933	
ա) Զիեր	153	172	181	178	181	170	169	
բ) Խոշոր յեղջ. անաս.	1905	1354	1462	1447	1278	1218	1086	
գ) Վոչխար. և այծեր	2266	2878	2574	2170	1999	1557	1394	
դ) Խողեր	50	23	16	18	21	36	43	

Այս աղուսակը լիովին հաստատում ե այն յեղբակացություններն ու վերլուծությունը, վորը տվել ե ընկ. Ստալինը Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարում ԽՍՀՄում գլխաքանակի դրության մասին, նույնպես և ԱՄԽՀ-ի նկատմամբ:

Այս աղուսակից հետեւլում ե, վոր վերակազմակերպչական շրջանի մախումներն Աղբբեջանի պայմաններում ամենից ուժեղ անդրադաել են կաթնամթերքատու անասունների վրա, վորը գրեթե կրկնապատիկ կը ճատկել ե նախապատերազմյան մակարդակի համեմատու-

*) Բառ Աղբաղանտհաշվարի նյութերի:

թյամբ: Արանում իր արտահայտությունն ե գտնում այն, ինչի մասին խոսել ե ընկ. Բագիրովն Աղբկոմկուսի (բ) 12-րդ համագումարում:

”Կուլակային ունեվոր տարերը, կատաղի դիմադրություն ցույց տալով կոլեկտիվացմանը, ավագակտրար վոնչացրել են իրենց անասունները: 1929-31 թվերին Անդրբեջանի մի շարք շրջաններում կոլտնտեսական շինարարության մեջ տեղի ունեցած աղավաղումները, մթերատու անասունների հարկադրաբար հանրայնացումը՝ դասակարգային ծավալուն պայքարի պայմաններում, հացըրին նրան, վոր գյուղի կիսագիտակից մասը վոչնչացրեց անասունների գլխաքանակը կոլտնտեսության մեջ մտնելուց առաջ“:

Ընկ. Ստալինի յեղբակացությունն այն մասին, վոր „գյուղատնեսության անասնապահական նյուղի ավելի շատ հագեցվածությունը խոռոր-կուլակային տարրերով...“ վերակազմակերպման տարիներում լրջորեն անդրադարձավ անասունների վոչնչացման գծով, լիովին հաստատվում են Աղբբեջանի փաստերով: Անասնապահական տընտեսության հենց այդ մասում ունեցել ենք խոշոր կուլակային տարրեր: Որինակ, Ղազախի շրջանում, կուլակ Հաջի Եմինն ունեցել ե 10 հազար վոչխար, Աղջաբեղում կուլակ Կաջին ունեցել ե 15 հազար, Գյանջայում կուլակ Հասան Թաթ Ողլին ունեցել ե 6 հազար վոչխար, և այն:

Զիու գլխաքանակի վերաբերմամբ սխալ կիմներ յեղբակացություն անել, թե կուլակը „խնայել ե“ ձիուն: Գործըն այսպես չի դրված: Յեթե թվերն վերցնենք ըստ շրջանների, ապա շրջանների մի ամբողջ խմբում ունեցել ենք, որինակ Մուղանում, ձիու գլխաքանակի անկումը 40-50%: Դա բացարվում է նրանով, վոր այն շրջաններում, վորակեղ ձին հանդիսացել ե արտադրության միջոց, բանող քաշող ուժ՝ այնտեղ կուլակը քիչ շահնք չի թափել վորպեսզի ձիու գլխաքանակը վոչնչացնելով քայքայի կոլտնտեսությունները: Շրջանների մի այլ մասում կուլակը վոչնչացրել ե յեղներն ու գոմեշները: Այսպես,

յեթե 1930 թվականին բանող յեզների և գոմեցների ընդհանությունը գլխաքանակը կազմում էր 427,5 հազար գլուխ, ապա 1933 թվականին նա կազմում է 242,3 հազար գլուխ, այսինքն՝ կրծատվել է գրեթե 58 %-ով։ Բացի այդ, մի ամբողջ շարք շրջաններում՝ կոլտնտեսությունների մեծ մասում մինչև 1933 թվականը ձիերը չեն հանրայնացրել՝ թողնելով դրանց անհատական ոգտագործման։


Ի՞նչպես են բաշխվում յեղած անասունները կոլտընտեսությունների և մենատնտեսների միջև:

1933թ. (Հաղար պլուխներով)

	Կոլտնատեսություններ	Մենա- տնտեսներ
Զիւկը	80,4 (նըանցից հանրայնաց). 52,0)	86,1
Խոզ. յեղջ. անաս.	560,6 » »	51 5,6
Վոչխարիներ և այծեր .	486,9 » »	838,1
Խողեր.	31,4 » »	10,0

Տարեց-տարի կոլանտեսություններում զիմաքանակի անշեղ աճում ունենք, զիմավորապես կոլեկտիվացման հիման վրա: Բայց, մենատնտեսները, ինչպես յերեկում և աղյուսակից, գյուղատնտեսության անամնապահական ձյուղում դեռ մեծ տեղ են գրավում:

Այդ դրությունը բացատրող մամենաներից մեկն ել այն ե, վոր անասնապահական շրջաններում կոլեկտիվացումը ցածր է կազմում։ Այսպես յեթե առ 1-ը հունիսի 1933 թ. անտեսությունների կոլեկտիվացման տոկոսը բամբակային շրջաններում միջին հաշվով հասել ե 69,7%-ի, ապա անասնապահական շրջաններում՝ միայն 44,2%-ի։ Կան այնպիսի շրջաններ, ինչպիսին ե Քելբաջարը, վորտեղ կոլեկտիվացումը կազմել ե 17%, Ղոնախքենդինը՝ 21,9% և այլն։



Զոռտեխնիկական կայանի ցեղալին արտադրող „Զերու,

Աղբբեջանի անասնապահության դրության լրիվ պատկերը տպակա համար, քննենք անասնապահական տնտեսության առանձին տեղամասերի դրությունը:

ԿՈԼՏՆԵՏԵՍԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԸ

Անասնապահության պրոբլեմի լուծման հիմնական ուղին ավիճելի յեւ Դա՛ խորհանտեսությունների և կողմանական ավագանությունների ուղին եւ Մանր-գյուղացիական անասնապահությունը հենց իր բնույթով չի կարող ապահովել անասնապահության աճման արագ աեմպերը և վորակը: Այդ իհարկե, չի նշանակում, զոր հիմա մ' նք չպետք եւ աշխատենք ձեռք բերել գլխաքանակի աճում աշխատավոր մենատնտեսների՝ վաղվա կողմանական երի:

մոտ, վորոնք դեռ բավականին գդալի տեղ են բռնում, ինչպես այդ նշվեց վերեվում, Աղբբեջանի գյուղատընտեսության մեջ, առանձնապես անասնապահական տնտեսությունների բնագավառում։ Բայց հիմնական գիծը կայանում են նրանում, վորուեսզի «մեր քաղաքականության հենձան կետերը հանդիսացող խորհնանեսություններ, կոլտնտեսություններ կազմակերպելու միջոցով աստիճանաբար վերակազմակերպել այժմյան մանր գյուղացիական անասնապահության տեխնիկան և տնտեսական հիմքը» (Ստալին)^{*)}։

Կոլտնտեսային ֆերմաները, ինչպես և անամնապահական խորհնանտեսությունները, խոշոր ապրանքային տնտեսության սոցիալիստական ձեզ հանդիսանալով, ունեն հրակայական առավելություններ և հնարավորություններ մանր գյուղացիական պրիմիտիվ անասնապահության հանդեպ։ Նրանք հնարավորություն են տալիս կազմակերպել արտադրությունը գիտական հիմունքով, կիրառելով այստեղ զոռակինիկայի և վետերինարիայի խոշոր նվաճումները, լայնորեն ծավալելով ցեղականության գործը և ձեռք բերել անասունների բարձր մթերատվություն, բարձր կաթնատվություն և մսի ու բրդի արդյունքներ։ Կոլտնտեսային-ապրանքային ֆերմաներն ունեն անշեղ աճում։ Նրանք ավելի ու ավելի մեծ տեղ են գրավում։

Միա համապատասխան աղյուսակը։

Կոլտնտեսային-ապրանքային Ժերմաներում գլխաբանական դինամիկան Ս.ՍԽՀ-ում

(Հազար գլուխներով)

Ժերմաների տեսակները	1931թ.	1932թ.	1933թ.
Կաթնապրանքալին ֆերմաներ	39,77	37,62	49,11
Վոչխարաբուծական ապրանքարաններ	87,35	107,21	149,58
Խողարուծական ապրանք. կոլտնտեսային ֆերմաներ	7,40	16,64	20,09

^{*)} Սառաւելու կազմի հարցերը, 9 հրատ. եջ 545։

Սակայն պետք ե ասել, վոր գլխաքանակի այդ աճումը մինչև 1933 թ. տեղի յե ունեցել վոչ թե ինաշիվ սեփական վերաբաղրության, այլ գերազանցապես նոր ֆերմաների կազմակերպման հաշվին։ Յեվ միայն 1933 թ. սկսած ե, վոր նկատվում ե հոտի աճումն ի հաշվի սեփական վերաբաղրության, կազմելով կաթնապրանքային ֆերմայի ընդանուր գլխաքանակի $7,5^0/0$ -ը, վոչխարաբուծական ապրանքային ֆերմաների $14,5^0/0$ -ը, խողարուծական ապրանքային ֆերմաների 9,6 %-ը։

Այդ տոկոսն ավելի բարձր կլիներ, յեթե հաշվի առնվի, վոր մատղաշների մի մասը 1933 թ. արվել են կոլտնտեսականներին՝ անհատական ոգտագործման համար, իսկ կաթնապրանքային ֆերմաներում մոզիներ ու յեռամյաներն անցել են բանող անասունների մեջ։

Սակայն, Ս.ՍԽՀ-ում, ամբողջությամբ վերցրած, ֆերմաների հոտերի ի հաշվի սեփական վերաբաղրության աճման առկայության պայմաններում՝ ապրանքային ֆերմաների փաստական դրությունը մնում ե ավելի լավը ցանկանալ նրանցում գոյություն ունեցող ահազին հնարավորությունների տասերրոդ մասն անգամ չեն ոգտագործվում։ Ո՞վ ե մեղավոր դրանում՝ մենք կամենք հետագայում, իսկ այժմ կտանք կոլտնտեսային ապրանքային ֆերմաների դրության վորակական բնութագրությունը։

Յեթե գիտենք կոլտնտեսային ապրանքային ֆերմաների աշխատանքների դրությունն Աղբբեջանում, ապա առաջին հերթին աչքի յե ընկնում ըրջանային կուսակցական, խորհրդային և հողային որգանների կողմից ղեկավարության լիովին բացակայությունը։

Որինակ, վոչ այլ ինչով, յեթե վոչ ղեկավարութան լիովին բացակայությանը կարելի յե բացատրել այն փաստը, վոր մի շարք ֆերմաներ վոչ միայն չեն կարողացել ոգտագործել խոշոր սոցիալիստական արտադրության բոլոր առավելությունները, այլ ընդահակառակը, մատղաշների ահազին պակասում են տվել։

Վոչխարաբուծական ապրանքային ֆերմայում, Ղազախի շրջանի, կարաքեսաման գյուղի “Ղըղզլ Որդու, կոլտնտեսության 33 թ. ճնված 857 գառներից սատկել են 357-ը կամ 42,5% -ը:

Նույն այդ շրջանի, «Զահմեթ» կոլտնտեսության կաթնապրանքային ֆերմայում ճնված 49 հորթերից սատկել են 21-ը, կամ 43% -ը:

Պաղար գյուղի կոլտնտեսության խողաբուծական ապրանքային ֆերմայում՝ 115-ից սատկել են 70 խոզ կամ 60,9% -ը:

Մի շաբթ շրջաներում նույնպես մատղաշների պակասությն աճագին տոկոս ե կազմել: Որինակ, Ղաջնի շրջանում սատկել ե հորթերի 28,4% -ը, Ղազախում՝ 19,1% -ը, Քելբաջարի շրջանում սատկել ե գառների 27,6% -ը, Կարյագինում՝ 21,4% -ը, Շամխորի շրջանում՝ խոճկորների՝ 60,5% -ը, իսկ Նարիմանովի շրջանում՝ 31,1% -ը:

Ինչո՞վ բացատրել այսպիսի դրությունը կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում: Այդ բացատրվում ե նախ և առաջ նրանով, վոր այդ ապրանքային ֆերմաներում բացակալում ե աշխատանքի ճիշտ կազմակերպումը, տիրում ե դիմազրկություն և հավասարանք: Ֆերմաներում հաճախ չի դիմազրկություն և հավասարանք: Ֆերմաներում հաճախ բացակալում են հասարակական անասնագումեր, անասնապահների մեջ չկա զոռտեխնիկական ուսուցում և այլն:

Պարզ ե, վոր դրա հետեւանքով, մենք ունենք անառուների մասսայական հիվանդացման դեսքեր, անկման մեծ տոկոս, անասունների ցածր ապրանքայություն և հյուծվածություն, վատ սերունդ և հանրագումարում՝ անասնապահության զարգացման թույլ տեմպեր:

Մինչդեռ, Աղբբեշանում կուսակցության կողմից ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմաններն անասնապահության արագ զարգացման համար: Այդ հասրավորությունները մինչեւ հիմա շատ կոլտնտեսություններում են չողտագործված:

Մեզանում գյուղի դեռ վոչ բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններ ունեն լրիվ պատկերացում անասնապահության զարգացման հեռանկարների մասին իրենց շրջանում: Ընկ. Ստալինի լոգունգը՝ արտադրության տեխնիկային տիրապետելու մասին անասնապահական կոլտնտեսությունների և ֆերմաների շատ կոմունիստների համար դեռ գործողության ծրագիր չի հանդիսանում:

Մի քանի ղեկավարների անպատասխանատու և ոպորտունիստական վերաբերմունքի հետեւանքով, մի շաբթ շրջաններում և գյուղերում անասնապահությունը հանձնըվել ե ինքնահոսի: Շատ շրջաններ „անասնապահական“ կոչում են կրում միայն ձևականորեն: Նա նրանց մոտ հետ ե մնում զարգացման ընդհանուր տեմպերից, ամեն տարի պակասում ե ընդհանուր գլխաքանակը և այլն:

Պարզ ե, վոր այդ բոլորը խոսում են այն մասին, վոր հողային և շրջանային կուսակմակերպությունների կողմից չի յեղել ոպերատիվ ղեկավարություն, բացակայել ե ֆերմայի դրության համար պատասխանատու վորոշակի անձնավորությունների ամրացումը, վորի հետեւանքով աշխատանքն անց ե կացել ինքնահոսով և այդպիսի ֆերմաներում խլուրդային աշխատանք ե տարել դասակարգային թշնամին՝ կոլտնտեսությունները և նրանց ֆերմաները քայլայելու նպատակով:

Անասնապահության դրությունն Աղբբեշանի առանձին շրջաններում, մասնավորապես կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում, խոսում ե այն մասին, վոր շատ դեպքերում կուսակցական-մասսայական աշխատանքների ծանրության կենարոնը չի փոխադրվել կոլտնտեսությունները, ֆերմաները, բրիդադները. կուսակցականների, կոմերիտականների դասակարգային զգոնությունը չի բարձրացվել արժանի բարձրության վրա:

Դասակարգային թշնամին կիրառում ե մասարարության ամեն տեսակի բացահայտ և քողարկված մեթոդները:

Կուլակն իր քաղաքականությունը տանում ե գյղողների, հացկատակների (լոդրների), գողերի և խաբերաների ձեռքով։ Նա վասում է կերի նորմավորմանը՝ հանրայնացըրած անսառների համար, հասարակական գոմերի կազմակերպմանը, մատղաշների աճեցմանը, արտատեղիներում, սիլոսացման գործում, անսառների խնամքին և այլն։ Անսառապահական շրջաններում կուլակն ամենից շատ աշխատում է հարվածը հասցնել ժողովրդական տնտեսության այլ կարեվոր ճյուղին։ Նա հովվի, ծիապանի աշխատանք ե հանձն առնում, „աշխատում ե“ սեպարատորի մոտ, „ինսամում ե“ մատղաշներին։ Նա աշխատում է այդ վճռական տեղամասերում ունենալ իր գործակալներին, ազգականներին, վորպեսզի վասի սոցիալիստական անսառապահության գործին։

Շատ դեպքերում կուսքիջներն ու գյուղխորհուրդները չեն նկատում դասակարգային պայքարի այդ առանձնահատկությունները ներկա ետապում, խաղալիք են դառնում կուշակի ձեռքին և ոբյեկտիվորեն ոգնում են նրան:

Դասկարգային թշնամուն—ասել ե ընկ. Ստալինը,—
փնտում են կղտնաեսությունից դուրսը, փնտում են
նշան, վորպես գաղանային ֆիզիոնոմիա ունեցողի՝ ահա-
գին ատամներով, հաստ վզով, թագցրած զենքը ձեռքին-,
կուլակին փնտում են՝ ինչպես մենք ճանաչում ենք
նրան պլակատներից։ Բայց այդպիսի կուլակներ վաղուց
ե արդեն վոր չկան առյօներելույթ։ Ներկայիս կուլակներն
ու յենթակուլակները, ներկայիս հակախորհրդային տար-
րերը մեծ մասամբ „սուս-փուս“, „քաղցր“ գըեթե „սուրբ“
մարդիկ են։ Նրանց չպիտի փնտու կոլտնաեսություննե-
րից հեռու, նրանք նստած են հենց կոլտնաեսության
մեջ և զրավում են պահեստապետների, տնտեսավարների,
հաշվետարների, քարտուղարների պաշտոններ՝ և այլն։
Նրանք յերբեք չեն ասի „կործի կոլտնաեսությունը“, նը-
րանք կոլտնաեսությունների „կողմն են“, բայց նրանք
կոլտնաեսությաններում տանում են այնպիսի սաբուտաժ-

Նիկական և վասարաբական աշխատանք, վորից կուտընտեսությունները լավ որ չեն տեսնի”:

Ընկ. ՍՏԱԼԻՆԻ այս ցուցմունքները յուրացված են գեռես անսամնապահական շրջաների վոչ բոլոր կոմունիստ-ների կողմից: Վերջնենք մի քանի որինակներ.

Ստալինի անվան կողմանտեսության մեջ՝ յեղել ե 5
կուլակային անտեսություն։ Ֆեյզալի Մասսայի ողլին
„պատահմամբ“ կոլտնտնսության յերկու լավագույն կո-
վերին քաղել ե ձորը, վորանեղ և նրանք վոչնչացել են։

„Բիլգյա“ կոլտնտեսության մեջ բրիգադի անասնա-պահը յեղել ե բանողի տը:

Պարզ ե, վոր անսամբլահական շրջանների կուսակցական և խորհրդային ու հողային կազմակերպությունների աշխատանքի այդպիսի դրուժյան պայմաններում սոցիալիստական անսամբլահությունը բարձրացնելու վերաբերյալ աշխատանքների բարելավման մասին խոսք լինելու հի կարող:

Դրա հետ միասին, պետք է ուղղակի ասել, վոր յեթե գյուղի կուսկազմակերպությունների աշխատանքում իսկական բեկում չկատարվի, ապա այդպիսի դրությունը կարող է վտանգի տակ դնել մատղաշների քանակի հետագա ընդդարձակ վերաբերությունը 1934 թվականում։

Սրանից հետեւում ե, վոր կոնկրետ և գործառնական զեկավարության, առանց՝ անասնապահական ապրանքային ֆերմաների աշխատանքը բարելավելու վերաբերմամբ՝ ընդունված վորոշումների կատարման ստուգման, չի կարող տեղի ունենալ անասնապահության հետագա բարձրացումը։ Այդ իսկ պատճառով Ադրբեջանի կուսակցության կենտրոնական կոմիտեն, իր 1934 թ. փետրվարի

6-ի վորոշման մեջ, միանդամախ ճիշտ կերպով պարտավորեցրեց „բոլոր շրջկոմիների քարտուղարներին, շրջգործկոմներին նախագահներին, խորհութեառությունների դիրեկտորներին և քաղբաժինների պետերին՝ շրջանում և խորհութեառության մեջ հատուկ հաշվառման տակ վերցնել՝ մատղաշները պահպանելու գործում անբարեհաջող ֆերմաները, կցել այդ կողանտեսությունների պատասխանառու աշխատողների, նրանց վրա զնելով ֆերմաների գրության պատասխանատվությունը՝ ամենից առաջ, մատղաշները պահպանելու և աճեցնելու համար, խոճկորածնության, գառնածնության ու հորթածնության կամպանիայի հաջող անցկացման համար և այդ ֆերմաները կուղային և հակախորհրդային տարրերից մաքրելու համար”:

ԽՈՐՀՆՏԵՍԱՅԻՆ ԱՆԱՄՆԱՊԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՐՍ ԲԵՐԵԼ ՃԵՂՎԱՍՏՔԻՑ

Անասնապահական խորհութեառությունները բավականչափ միս, կաթնամթերքներ, բուրդ են տալիս պրոլետարական պետությանը: Դրանում են նրանց հիմնական խընդիրը: ԱՄԽՀ-ն անասնապահական խորհութեառությունները 1933 թվականին ավելի լավ, քան 1932 թվականին, կատարել են պետությանն իրենց արտադրանքը հանձնելու պլանը: Այստեղ քիչ դեռ չեն խաղացել քաղբաժինները, վորոնք խորհութեառությունները կազմակերպչորեն անտեսապես ամրապնդելու գործում ձեռք են բերել մի շարք հաջողություններ: Այսուհանդերձ մի ամբողջ շարք խորհութեառություններ գեռևս $100^{\circ}/_0$ -ով չեն վոր կատարել են իրենց ամենաառաջին խնդիրը՝ արտադրանքի հանձնման պետական պլանի կատարումը (որինակ, Շամախու խորհութեառությունը 1933 թ. մայիս հանձնման պլանը կատարել են $80^{\circ}/_0$ -ով, յուղին՝ $45^{\circ}/_0$ ով, և այլն):

Խորհութեառությունների գրության ներքոնիշյալ գնահատականը, վորը տվել են կերպ Ստալինը կուսակցու-

թյան 17-րդ համագումարում, ամբողջությամբ և լիովին ու նույնիսկ ավելի սրությամբ պետք են վերաբերի ԱՄԽՀ անասնապահական խորհութեառություններին:

„Խորհութեառությունների նկատմամբ պետք են ասել, վոր նրանք գեռևս իրենց խնդիրների բարձրության վրա չեն մնում: Յես հեռու յեմ այն բանից, վորպեսզի խերագնահատեմ մեր խորհութեառությունների հեղափոխականացնող խոշոր նշանակությունը: Բայց յեթե համեմատենք պետության հակայական ներդրումները խորհութեառությունների գործում՝ խորհութեառությունների աշխատանքի ներկայիս փաստական արդյունքների հետ, ապա խորհութեառությունների նկատմամբ վոչ ձեռնտու ահադին անհամապատասխանության կստացվի”:

Միանդամայն անթույլատրելի յե այն դրությունը, վոր մենք գլխաքանակի կրծատում ունենք նաև խորհութեառություններում, ըստ վորում, այդ կրծատումն այստեղ կազմում են չափազանց մեծ տոկոս:

Ահա համապատասխան ազյուսակը, վորը ցույց է տալիս բոլոր սիստեմների խորհութեառությունների գլխաքանակի գինամիկան:

Անասունների գլխաբնակը բոլոր սիստեմների խորհութեառություններում (հազար գլուխներով)

Անասունների տեսակները	1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ.
Զիեր	—	0,05	1,8	3,1	3,0
Խոշոր յեղելավոր անասուն	—	0,25	13,5	12,4	10,1
Վոլշարներ և այծեր . . .	»	34,6	86,3	108,9	69,2
Խողեր	—	—	—	0,7	2,0

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր պրոլետարական պետությունը 1931 և 1932 թ. թ. խորհանտեսությունները համալրել եւ վոչ քիչ քանակությամբ անառուններով բայց այդ խորհանտեսությունների զեկավարների մի մասի անպատճախանատու և հանցագործ աշխատանքի շնորհիվ, անասունների, առանձնապես վոչխարների գլխաքանակը 1932 և 1933 թ. թ. ունեցել եւ զգալի անկում:

Խորհանտեսությունների աշխատանքի դրության լրիվ բնութագրության համար վերցնեք առանձնակի Ազմազլուրեատի և Ովցեկողարեսատի խորհանտեսությունները:

Ովցեկողարեսատի տվյալներով 32-33 թ. թ. ընթացքում Ազովցեկողարեսատի սիստեմում գլխաքանակի փոփոխության հետեւյալ պատկերը ունենք.

1932 թ. 1933 թ.

Հնդկանուր գլխաքանակը . . .	67,894	43,026
Ծին	26,401	25,519
Մուտք դրսից	12,423	105
Հնդամենը .	106,718	68,650
Մոի հանձնումը	28,125	15,450
Կորուստ	35,540	10,759
Տարվա վերջում մնում ե . . .	43,053	42,441

Դլխաքանակի այսպիսի ուժեղ կրծատումը, ինչպես յերեվում եւ վերևում բերված թվերից, տեղի յեւ ունեցել գլխավորապես կորուստների հետեւանքով, վորը 1932 թ. կազմել ե 33,2%, իսկ 1933 թ. 15,6%:

Ի՞նչ ե ներկայացնում իրենից այդ կորուստը: Ովցեկողարեսատի տված թվերի վերլուծությունը, վորոնք բնորոշում են խորհանտեսությունների վերաբերյալ կորուստները, խոսում են այն մասին, վոր կորուստների թվում ահազին տոկոս ե կազմում անկումը: 1932 թ. Մինգեշառը խորհանտեսությունում սատակումը՝ կազմել ե 17,616, մորթած՝ 2,158, կերպել են զայլերից՝ 770, գողացվել են՝ 6,534:

1933 թ. անկումը՝ 1,725, մորթոտում՝ 3,379, կերպել են զայլերից՝ 374, տարերային դժբախտություններով՝ 65, գողացվել են՝ 471:

Նույնպիսի պատկեր ունենք նաև Ովցեկողարեսատի մյուս խորհանտեսությունների գծով: 1932 թվին „Կրասնի Սամուլս“ խորհանտեսությունում կորուստը կազմել ե 5,132, այդ թվում սատակումը՝ 2,535, „Բեյուք-Դուզ“ խորհանտեսությունում՝ 3,403, այդ թվում սատակումը՝ 2,714: 1933 թվին „Կրասնի Սամուլս“ խորհանտեսությունում կորուստ 2,480, այդ թվում սատակումը՝ 1,212, „Բեյուք-Դուզ“ խորհանտեսությունում՝ 2,134, այդ թվում սատակում՝ 1,846:

Ինչպես յերեվում ե վերեվում բերված թվերից, Ովցեկողարեսատի խորհանտեսություններում ահազին տոկոս կազմող սատակումների հետ միատեղ, ունենք կորուստի այնպիսի հատվածներ, վորոնք աշխատանքի ճիշտ դրման գեպօւմ կարելի կլինի հասցնել զերոյի:

Ի՞նչ ե ներկայացնում իրենից, որինակ, գլխաքանակի մորթոտումը, թեկուզ Մինգեշառուրի խորհանտեսությունում, վորը 1933 թ. կազմել ե 3,379 գրուստ: Պարզ ե, վոր այդ այսպիս կոչված ստիպողական մորթոտումը բացառիկ անտնտեսվարության, կուլակային նենգությունների և անտնտեսվարության, կուլակային նենգությունների ցաք ու ցրիվ տալու արդյունք եւ: Արդյոք կարելի յեւ թույլ տալ, վոր հետագայում ևս գոյություն ունենա կորուստի այնպիսի հողվածներ, ինչպիսին են գողությունը, մորթոտումը, զայլերի զգզգումը և այլն: Պարզ ե, վոր այդ անհանդուրժելի յեւ Դա անհանդուրժելի յեւ նրա համար, վոր այդ հողվածների գոյությունն արդյունք ե անտնտեսվարության, գլխաքանակի պահպանման, ճիշտ խնամքի բացակայության և այլն:

Դրա հետ միասին, գործի ճիշտ կազմակերպման պայմաններում սատակումը նույնպես կարելի յեւ հասցնել մինիմումի: Վերցրեք սատակումը Ովցեկողարեսատի սիստեմում 1933 թ. ընթացքում: Նախնական տվյալների համաձայն այդ սատակումը տեղի յեւ ունեցել հյուծվածու-

թյունից 21% , շնչառության որդանների հիվանդությունից 21% , պիրոպլազմոզայից 19% , վորովայնա-աղիքային հիվանդություններից 8% :

Այսպիսով, կորուստների միջև 70% բացատրվում է խորտնակությունների աշխատանքի անկարգավորությամբ, անասնաբուժական ոգնության, գլխաքանակի ճիշտ խնամքի բացակայությամբ:

Այդ փաստերը խոսում են, նախ և առաջ, այն մասին, վոր գլխաքանակի այդպիսի մեծ կրծատումը բացատրվում է այն պահատար աշխատանքով, վորը ունեցել ենք և դեռ կա Ովցիվոդտրեստի սիստեմում: Նրանք խոսում են ապա խորտնակությունների կուլակներով և հակախորհրդային տարրերով ուժեղ կեղտոտվածության մասին: Վերցնենք Մինգեչառը խորհանակությունը: Ի՞նչպիսի մարդիկ են աշխատել այնտեղ վորպես զեկավար աշխատողներ: Նախկին հայտնի կուլակ Զուբարը, վորն իր ժամանակին չյուսային կովկասում ունեցել ե մինչև $10,000$ գլուխ վոչխարի հոտ, 1932 թվին յեղել ե ֆերմայի վարիչը: Շախմար Ասագովը (նախկին դոչի) յեղել ե ֆերմայի վարիչը: Ենոնային Ղարաբաղում հայտնի վոչխարաբույծ Յուզբաշեվը խորհանակությունում ապաստարան ե գտել և աշխատել ե վորպես վոչխարաբույծ: Պարզ ե, վոր այդ կուլակային և բանդիտային տարրերը, խցկելով խորհարնտեսության ամենավճռական պոստերը, վարել են ամեն տեսակի աշխատանքի վնաս սոցակիստական անասնապահության:

Գլխաքանակի կրծատումը Ովցեվոդտրեստի սիստեմում բացատրվում է, վերջապես, խորհանգեսությունների և Ովցեվոդտրեստի զեկավարների կողմից խորհանտեսությունների աշխատանքին ցույց տրվող կոնկրետ և գործառնական զեկավարության բացակայությամբ, իրենց հանձնարարված գործի համար պատասխանատվության բացակայությամբ:

Վերցնենք դարձյալ Մինգեչառը խորհանտեսությունը, Խորհանտեսությունը գտնվում ե յայլաղից $300\text{-}350$ կիլոմետր տարածության վրա:

Ի՞նչպիսի կոնկրետ զեկավարություն կարող ե լինել, յեթե խորհանտեսության զեկավարները նստած են Մինցեադուրում: Այդպիսի զեկավարության հետեվանքով, յայլաղներում, վորտեղ գլխաքանակը մնում ե միջև 6 ամիս, կատարվում են խայտառակություններ:

Յայլաղների հեռավորության պատճառով, հովիմները յերբեմն նստում են առանց հացի 10 որ, բացակայում ե աշխատանքը հովիմների հետ, չկան կարմիր անկյուններ, աշխատավարձում՝ հավասարանք, հովիմներին հանդերձանքով ապահովելու անբավարարություն և այլն, վորը բնակաբար անդրադառնում ե նրանց աշխատանքի վրա, և հովիմը կորցնում ե ամեն մի շահագրգուվածություն հանդեպ իր աշխատանքի:

Այդ դեռ քիչ ե, աշխատանքի վատ կազմակերպման հետեւանքով, հաճախ վոչ բոլոր վոչխարներն կթվում և յերբեմն չկթված են մնում վոչխարների մինչև 50% , վորն ազդում ե վոչ միայն պետությանը պանիր հանձնելու վըրա, այլ և վատ ե անդրադառնում վոչխարի առողջության վրա:

Ֆերման անասնաբուժներով վաս ե նապահովված, իսկ շատ գեագերում յեղած այդ անասնաբուժները, գործունյա ոգնության փոխարեն, զբաղվում են սատկումների ակտեր կազմելով:

Փարախները միանդամայն անպետք են: Օմառ ժամանակ, յերբ գլխաքանակը գտնվում ե յայլաղներում, պահպանության բացակայության հետեվանքով, փարախները դես ու դեն են քաշքաշում գյուղացիների կողմից:

Գառնակոցներում խոնավ ե, մուլթ և ցուրտ, վորի հետեվանքով տեղի յե ունենում մատղաշների հսկայական կորուստ և գլխաքանակի ցրտահարում:

Ավելի լավ պատկեր չեն ներկայացնում նաև Ազմալուտրեստի խորհանտեսությունները: Յեթե առ 1-ը հուն-

վարի 1932 թ. Ազմաւոտքեսատի բոլոր խորհանակեսություններում խոշոր յեղջյուրավոր անասունները կազմել են 12,680, ապա առ 1 ը հունվարի 1934 թ. կա 5.965 դըլուխ:

Այստեղ ել, ինչպես և Ազովցեվորտընատի խորհանատեսություններում, գլխաքանակի կրծատումը տեղի յե ունեցել գլխավորապես մատղաշների կորուստի հաշվին:

Սատակումներն այստեղ հանդիսանում են կողուստի վճռական հատվածը:

ՅԵԺԵ 1932 թ. ընդհանուր կորուստը կազմել է 3.036,
ապա սատկումը կազմել է 2.615; 1933 թվին ընդհանուր
կորուստը՝ 2.440, ալի թվում սատկումը՝ 1.661:

Դրա հետ միասին պետք ե նշել, վոր յեթե Ովցեվող-
տրեստի սիստեմում 1932 թ. համեմատությամբ կորուստի-
խիստ իջեցում ունենք ($32,2^0/0$ -ից $15,5^0/0$ -ի), ապա Աղ-
մալոտրեստի սիստեմում զլիաքանակի կորուստը 1932 թ.
շարունակում ե մնալ գրեթե 1932 թ. մակարդակի վրա:

Ինչպես արդեն վերեվում ասված եր, Ազմանլոտրես-
տի խորհանություններում կորուստը տեղի յե ունե-
ցել գլխաքանակի հորթերի կորսոյան հաշվին, վորը խորհ-
անութեաությունների մեծամասության մեջ կազմում ե
ահագին տոկոս։ Այսպես, որինակ, հորթերի կորուստը
1933 թվին կազմել եւ։

Շամախու	Խորհմանաեսությունում	— 64,04 %
Զերմողիլի	»	. 56,55%₀
Կուբախալիլի	»	. 63,62%₀
„Պոքեղա սոցալիզմա“	»	. 49,0%₀
Քուրդիստանի	»	. 44,51%
Լիսագորի	»	. 17,94%₀

Ինչով բացատրել Մանկութեատի խորհանութեառությունների այս դրությունը:

Դրա պարզաբանման համար վերցնենք Շամախու խորհ-
անտեսությունը, վորն իր դրությամբ և աշխատանքով
շատ քիչ ե տարբերվում Ազմալոտրեստի մյուս խորհ-
անտեսություններից:

ՄԻ ԽՈՐՀԵՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Շամախու № 127 խորհունտեսությունը կազմակերպվել է 1931 թվականում։ Հենց սկզբից խորհանտեսության համար յուրացվել եր խոշոր արդյունաբերական անասնապահության զարգացման համար անպետք տեղրիտորիա ($16,570$ հեկտար), վորը բաղկացած եր մի քանի իրարից շատ հեռու տեղամասերից (Թաթարլի, Ղուշչի, Ղլաղի), վորոնք չունեյին հարմար ճանապարհներ, չեյին ապահովված ջրով, անբարենպաստ եյին կերի ամուր բազա կազմակերպելու համար և վարակված համաճարակալին մայրակայով։

Խորհանտեսությունը յերեք տարվա իր գոյության
ընթացքում զուրկ է յեղել տնտեսական, կուսակցական և
պրոֆեսիոնալ ուժեղ զեկավարությունից, վորի պատճա-
ռով, նույնպես և նախկին դիրեկտորի՝ Զորտարեկվակու-
բացահայտ հանցագործ աշխատանքի հետեւվանքով, խորհ-
անտեսությունը մատնվել է քայլայման:

Անաստունների գլխաքանակի քանակությամբ այդ խորհ-
տնտեսությունն Անդրկովկասի խոշորագույն խորհտնտե-
սություններից մեկն ե հանդիսանում, բայց այդ խորհ-
տնտեսությունը գլխարվորող կոմունիստների բոլցեվիկյան
զգոնության և խորհտնտեսությունը սոցիալիստական ա-
նամնապահության որբնակելի կետի վերածելու համար
տարվելիք համառ պայքարի բացակայության հետեվան-
քով, դասակարգային թշնամին՝ ոգտվելով խորհտնտեսու-
թյան ղեկավարների հաշտվողական վերաբերմունքից
խցկվել ե խորհտնտեսության մեջ և հասցըել ե նրան
քայլայման:

Բավական ե նշել, որինակ, վոր մինչև 1932 թ. գեկ-
տեմբերի 1 ը այդ խորհանակեսության մեջ խոշոր յեղ-
ջուրավոր անասունների սատակումը կազմել ե 2000 գըլ-
լից ավելի, վորի հետեւանքով ներկայումս այդ խորհ-
ից ավելի, վորի հետեւանքով ներկայումս այդ խորհ-

տնտեսության մեջ անասունների գլխաքանակը կազմում
է 1100 գլուխ:

Քաղբաժնի կազմակերպման շնորհիվ խորհտնտեսու-
թյան մեջ կան անվճելի հաջողություններ, բայց դրա
հետ միասին պետք են նշել, վոր տնտեսական ղեկավարու-
թյունը չի գտնվել և չի գտնվում իր դրության բար-
ձրության վրա: Քաղբաժնի աշխատողները վատ չեն ձեռ-
նամուխ յեղել բերքահավաքի, աշնանացանի պլանի կա-
տարմանը, բայց բավականաչափ ուշադրություն չեն
դարձրել անասնապահությանը, դրա հետեւանքով ամենա-
լավ ամիսներին՝ հունիս, հուլիս, սգոստոս, տեղի յե-
ռնեցել մատղաշների մասսայական սատակումը, վորը
1933 թ. կազմել ե մոտ 75%: Բացի այդ, մինչև 1934
թվականի հունվար ամիսը, այսինքն՝ ամենացուրտ որե-
րին, անասունների գլխաքանակը ապահովված չի յեղել
անասունների բազաներով, վորի հետեւանքով № 1 ֆեր-
մայում տեղի յեռնեցել մասսայական վիժումներ և
կաթնակթման իջեցում, վորը հասել ե մինչև 0,7 – 0,8
լիտրի:

Ազմասլոտրեստի վատ ղեկավարության շնորհիվ, չորս
տարվա ընթացքում չի լուծվել խորհտնտեսության տեղա-
մասի և կենտրոնական աղարակի հարցը, դրա համար ել
խորհտնտեսության յուրաքանչյուր նոր դիրեկտորը կա-
պիտակ շինարարություն ե սկսել այս կամ այն տեղամա-
սում, նոր դիրեկտորն սկսել ե մի ուրիշ վայրում և մի
շարք դիրեկտորների „աշխատանքի“ հետեւանքով, Ղուշ-
չի գյուղից սկսած մինչև Թաթարլից մի քանի անասնա-
յին բազաների շինարարություն ե սկսել, վորոնց մի մա-
սը թողվել ե անավարտ:

Վերջապես, այս տարի մոտ մեկ միլիոն ռուբլի յե-
ծախսվում Թաթարլիում յերեք անասնային բազայի կա-
ռուցման համար, վորոնք Ազմասլոտրեստի վորոշմամբ
պետք ե տրվեն վորեե մեկին, քանի վոր խորհտնտեսու-
թյան համար վերջնական վայր ե վորոշված Ղալաղը, վո-
րը Թաթարլից 30.35 կիլոմետրի վրա յետ Պետական մի-

ջոցների այպիսի չարաշահության հետևանքով, խորհրդան-
տեսությունը մինչև հիմա յել չունի վոչ մի վայրելուչ
բնակելի շինություն, աշխատողներն ապրում են սոսկալի
պայմաններում, իրենց՝ ֆերմայի աշխատողների շինած
հյուղերում:

Բացի այդ, խորհտնտեսությունը սիստեմատիկաբար
չի կատարում իր պարտավորությունները պետության
առաջ: Անցյալ տարվա կաթնամթերքների պլանը կատա-
րել ե միայն միջին հաշվով 50%, այն ժամանակ յերբ լիո-
վին հնարավորություն կար վոչ միայն կատարելու, այլ
և գերակատարելու համար:

Այս բոլորն այն բանի հետևանքն ե, վոր խորհտնտե-
սության ղեկավարությունը բոլեվիկյան պայքար չի ծա-
վալել անասնապահության տեխնիկային տիրապետելու հա-
մար: Փոխանակ անասնապահության յուրաքանչյուր ման-
րամասսանության մեջ ներսուղվելու, զբաղվել են ընդ-
հանուր հարցերով:

Դասակարգային թշնամու դեմ բավարար պայքար չի
տարգում: Անասնապահական ֆերմաներում, աշխատանքի
ամենապատասխանատու տեղամասերը կեղտոտված են
խորթ, հակախորհրդային տարրերով: Կոմունիսաներ թա-
վակալովն ու Ալիյեվը, գոխանակ անասունների լավագույն
խնամքի և պահպանման համար պայքար ծավալելու, ի-
րենք են քայլայում ֆերման: Նրանց հովանափորության
տակ խորհտնտեսության մեջ վորպես բրիգագիրներ աշ-
խատում են կուլակային տարրերը (Գրյադունով, Զուլա-
բեկ, Խանատ Զերբալիեվ և ուրիշները):

Անասնապահ աշխատավարձի մեջ
լիակատար հավասարանք ե: № 2 ֆերմայի վորձը, վորը
կաթնամթյուն 1,5 մինչև 3 լիտր ե բարձրացում, ձեռք
ե բերել և կրծ ատել մատղաշների սատակումը, գործար-
քի արմատացման հիման վրա—չի տեղափոխվում մյուս
ֆերմաները:

Պարզ ե, վոր յեթե կոմունիսաների ակտիվությունը
չբարձրացվի՝ բոլոր այդ թերությունները վճռականորեն

ուղղելու համար, վոչ մի բարելավման մասին չի կարելի մտածել։ Շամախու խորհտնտեսության Քաղբաժինը, վորը քիչ բան չի արել խորհտնտեսությունը կազմակերպչառարնտեսապես ամրապնդելու գործում, պետք է 1934 թվին խորհտնտեսությունը վերջնականապես դուրս բերի ձեխքվածքից, նրան Շամախու շրջանում անասնապահության վերելքի համար հենակետ դարձնելով։


ԲՈԼԾԵՎԻԿՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՁԻՌԻՆ

Անասնապահական ֆրոնտում ամենակարեվոր տեղամասերից մեկն և հանդիսանում ձիու գլխաքանակի տեղամասը։

Գյուղատնտեսության մեքենայացումը վոչ մի կերպ չի հակասում ձիու գլխաքանակի պահպանման և զարգացման խնդրին։ Նույնիսկ լավ մեքենայացված տնտեսության մեջ ել՝ բոլոր մանր տնտեսական աշխատանքները պետք է կատարվեն ձիերով, յեզներով և ուղտերով։ Պետք է մինչև վերջ մերկացնել այս կամ այնտեղ մուտք գործող հականեղափոխական, վնասարարական այն „տեսությունը“, թե ձին արդեն պետք չե, թե հասել է ժամանակը համատարած մեքենայացման։

Ձին պետք է նաև կարմիր Բանակի համար։ Ընկ Վորոշիլովը 17-րդ համագումարում ունեցած իր յելույթում շատ սուր դրեց ձիու հարցը։ Ձիու նշանակությունը հրակայական և կարմիր Բանակի համար։ „Յեզ հիմա, — ասել ենկ. Վորոշիլովը, — և ապագայում մեր բանակը մեծ քանակությամբ ձի յե պահանջում, ըստ վարում լավ ձի, ձի, վորը լիովին համապատասխանի մեր զինված ուժերի զարգացման այն մակարդակին, վորի վրա գտնվում ենք մենք ներկա մզմենտում։“

Փաստերը խոսում են այն մասին, վոր Հողժողկոմատի և տեղական հողային ու կուսակցական-խորհրդային կազմակերպությունների կողմից մինչև հիմա յել ձիաբուծու-



Անգլիական ցեղի արտադրություն

թյան գործին նույնպես չի յեղել անհրաժեշտ դեկավարությունը։

Կուսակցության և կառավարության դիրեկտիվները՝ ձիու գլխաքանակի զարգացման և պահպանման վերաբերյալ, անց են կացված միանգամայն անբավարար կերպով։ Ամենից առաջ բացակայում է կոնտրոլ ու ամենորյահսկողությունը՝ ձիերի ճիշտ ոգտագործման և հարկ յեղած խնամքի համար։ Ձիու գլխաքանակին անբավարար չափով ե ապահովում կերով, վատ անասնաբուժական և զոոտեխնիկական սպասարկում և ստանում, տեղ ունի ձիերի սատակում և ուժեղ հյուծվածություն, տարածվել

հն զանագան հիվանդություններ (առանձնապես խորհություններում և ձիա-ապրանքային ֆերմաններում):

Դիպի ձիերն այդպիսի անպատճախանատու վերաբերմունքի հետեւանքով, սատակումները չեն քչանում, այլ շատանում են:

Այսպես, որինակ, Գիլի ձիաբուծական խորհություններում 1932 թ. սատկել ե 145 ձի, իսկ 1933 թվին՝ 132-ը: „Դաշյուղ“ խորհություններում 32 թվին սատկել ե 624-ը: Բազմի տրանսպորտային կազմակերպություններում 32 թվին սատկել ե 1088 ձի կամ 22%:՝

Այդ թվերը խոսում են բացառիկ անտեսավարության առկայության մասին՝ ձիաբուծական խորհություններում և տրանսպորտային կազմակերպություններում:

Սատակումների այդպիսի զգալի տոկոսը բացարկում է խորհությունների՝ խորթ, հակախորհրդային և կուլակային տարրերով կեղտոտվածությամբ:

Բանգյուղեսության բրիգադի կատարած ստուգումը Գիլի և Դաշյուղի ձիա-խորհություններում ցույց է ավել նրանց կազմակերպչա-անտեսական դրության ծայրահեղ անբավարարությունը:

Սատակումների զգալի տոկոսը բացարկում է զանազան հիվանդությունների առկայությամբ (պիլեսլազմոգա, մենենդիտա—նման հիվանդություններ, թոքերի բորբոքում և այլն), փորը բացատրվում է վետերինարա-պրոֆիլակտիկ սպասարկման ճիշտ դրման և գլխաքանակի պահպանման սլատշաճ կազմակերպման նկատմամբ անհրաժեշտ միջոցների անբավարարությամբ, իսկ յերբեմն ել դրա բացակայությամբ, առանձնապես ձիա-խորհություններում, փորտեղ ձիերի յերամակներն ամբողջ որը մնում են արոտաեղերում: Այդպիսի դրությունը Հողժողկոմատի և խորհությունների ղեկավարներին պարտավորեցնում է, մինչև մասսայական բեղմնավորման սկիզբը, անցկացնել անհրաժեշտ դիագնոստիկական հետազոտումը և հիմնական պրոֆիլակտիկական միջոցառումները դամբիկների յե-

րամակների առողջացման համար և ստուգել արտադրությունների կազմն ու վորակը, թողնելով բեղմնավորման միայն այնպիսիները, վորոնք անպայման առողջ են և պիտանի վերաբաղրման համար:

Կոլտնաեսությունների ձիաբուծական ապրանքային ֆերմաններում ձիու գլխաքանակի աճեցման գործը նույնապես լավ չեւ Հողժողկոմատի տվյալներով առ 1-ը հունվարի 1933 թ. յեղել են 45 ձիա-ապրանքային կոլտնաեսային ֆերմաններ՝ 2,677 ձի ընդհանուր գլխաքանակով, այդ թվում 1,605 գլուխ դամբիկներ: Առ 1-ը հունվարի 1934 թ. գոյություն ունեն 58 ձիա-ապրանքային ֆերմաններ 3,134 ընդհանուր գլխաքանակով, այդ թվում դամբիկներ 1,680: Սակայն, յեթե ուշադրության առնենք այն, վոր 1933 թ. ընթացքում կազմակերպվել են 14 նոր ձիաբուծական ապրանքային ֆերմաններ 939 ձի գլխաքանակով, աղա 1933 թ. ֆերմանների և նրանց մեջ ձիերի գլխաքանակի ընդհանուր բացարձակ աճման հետ միատեղ, մենք ունենք վաղուց գոյություն ունեցող շատ ձիաբուծական ապրանքային ֆերմանների անկում (Շամիսորի, Վերգյագուղի, Դաստավառ անասունների ինսամբի լավագույն հարվածային:



